տանի վերայ, որ ասպատակեց երկիրը եւ նուաճեց թշնամուն։ Հայաստանի Թէրէք՝ ծովակը ընդ-հանուրի սեպհականութիւն էր կազմում, եւ ով ինչ կամենում էր, օրսում էր այնտեղից։ Մուհամեդ արգելեց ծովակում օրսալ եւ նորա վերայ նշանակեց մի մարդ, որ նա օրսայ եւ վաճառէ, ստանալով նորանից դինը։ Ապա այդ իրաւունքը անցաւ նորա որդի Մրբվանին . . . Այս Թէրէքը աշխարհի հրաշքներից մէկն է, որովհետեւ նորա միջի մանր ձկները ամեն տարի տօնավաճառի ժամանակ անցնում են այս ծովակից նորա մէջ թափուող գետը, եւ նոցա մեծ բազմութեամբ ձեռքերով բռնում են. իսկ երբ վերջանում է տօնավաճառը, այլ եւս ոչինչ չեն գտնում։

82 թ. Մուհամեդ ի. Մրբվան յարձակեցաւ Հայերի վերայ եւ հալածեց նոցա. երբ նոքա խաղաղութիւն խնդրեցին, նա համաձայնեցաւ եւ դրեց նոցա վերայ Աբու Շէյխ ի. Աբդուլլահին։ Սակայն Հայք նորան դաւաճանեցին եւ սպանեցին։ Այլք պատմում են, որ նա սպանեցաւ 83 թ.

84 թ. Մուհամեդ ի. Մրբվան ասպատակեց Հայաստան։

85 թ. Մուհամեդ ի. Մրբվան ասպատակեց Հայաստան, մնաց այնտեղ ամառը, եւս ձմեռեց։

88 թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք եւ Աբաս ի. Վալիդ ի. Աբդուլմալիք արշաւեցին յունաց երկիրը։ Վալիդ գրել էր Հայաստանի կառավարչին հրաման՝ տեղեկացնել յունաց թագաւորին, որ խաղաղը եւ Հայոց լեռնական իշխաններից այլք համաձայնել են միմեանց հետ՝ նորա

---

1 Վանայ ծովը։ Հմմտ. Բելազորիի տեղեկութիւնը (վերեւ էջ 42—43), ըստ որում Հաբիբ ի. Մասլամայ ծովը թողեց ընդհանուրի սեպհականութիւն։